«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը»

Դաստիարակ՝ Արմինե Բալայան

Մանկապարտեզ՝ Փարաքար համայնքի, Մուսալեռ բնակավայր «Շառլ Ազնավուրի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 6

1.1 Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը նախադպրոցական տարիքի երեխաների համար 8

ԳԼՈՒԽ 2. 9

2.1 Մեր հայրենիքի խորհրդանիշները 9

2.2 Հայրենասիրությունը սկսում է հենց իմ գյուղից՝ Մուսալեռից..... 10

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.....13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր երկրում երեխաների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբ է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները սաների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու,

տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Հայրենասիրություն, բարոյական և դիվանագիտական սկզբունք, հասարակական զգացողություն, որի իմաստը սերն է հայրենիքի նկատմամբ և պատրաստություն ստորադրել նրա համար սեփական շահերը: Հայրենասիրությունը ենթադրում է հպարտություն Հայրենիքի նվաճումների հանդեպ: Հայրենասիրությունը ենթադրում է ազգային շահերի պաշտպանում, կապվածություն սեփական հողին, սեր դեպի հայրենիքի մշակույթը և սեփական լեզուն:

Հետազոտության նպատակն է երեխաների մեջ զարգացնել ազգային արժեքներ, գիտակից և պատասխանատու անհատ, ապագայում ճանաչեն ու սիրեն իրենց հայրենիքը, գյուղը որտեղ ապրում են:

Հետազոտության խնդիրներն են՝

- ուսումնասիրել քննարկվող հարցի վերաբերյալ մասնագիտական գրականություն
- հիմնավորել հայրենաճանաչողության ուսուցման դաստիարակչական նշանակությունը. Մեր հայրենիքի խորհրդանիշների՝ դրոշի, զինանշանի և օրհներգի միջոցով ուսումնասիրել և ճանաչել հայրենիքը:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրենասիրությունը ծագում է լատիներեն «պատրիոտ» բառից, նշանակում է հայրենիքը սիրող: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է: Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում տվյալ մարդու (դպրոցականի)՝ դեպի իր հայրենիքն ունեցած սիրո մեջ: Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը: Եթե հայրենիքում ժողովուրդ չկա, ուրեմն հայրենիք չկա: Առանց հայրենիքի, առանց հարազատ ժողովրդի մարդը լքյալ է, ինչպես Ռոբինզոնը: Նշանակում է հայրենիքից թանկ, ժողովրդից թանկ ոչինչ չկա: Ցիցերոնն ասում էր. «Մեզ համար թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի մեջ՝ «Հայրենիք»: Ցանկացած մարդու համար իր հայրենիքը սկսվում է իր տնից, իր բակից, իր այգուց: Հայրենիքը սկսվում է իր երկրի մի թիզ հողից, մի կում ջրից, մի հան դա մասից, մի կտոր երկնքից: Եվ ամենակարևորը՝ իր մայրենի լեզվից: Եթե այս ամենը մարդը չի հասկանում, ապա «հայրենիք» հասկացությունը նրա համար կդառնա մի ինչ-որ անորոշություն: Դպրոցը, ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Անկախ տարիքից, հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ: աշխատել հայրենիքի բարգավաճման, ժողովրդի բարօրության, բարեկեցության համար, «որդեգրել» հայրենիքում ընդունված, գործող օրենքները, ենթարկվել այդ օրենքներին, հարգել հայրենիքում սահմանված կարգն ու կանոնը, ունենալ գիտակցական կարգապահություն, մասնակցել տնտեսության, մշակույթի, գիտությունների,

տեխնիկայի զարգացմանը, պահպանել ժողովրդի արժանապատվությունը, ոչ մի դեպքում չխաղալ նրա պատվի հետ: Հայրենիքը, ժողովուրդը համարել բոլոր սրբությունների սուրբ սրբոցը, պաշտպանել հայրենիքը թշնամու ոտնձգություններից, հարկ եղած դեպքում, անգամ վերջին շնչում, մինչև արյան վերջին կաթիլը մարտնչել հակառակորդի դեմ, օրհասական պահերին բռունցքվել մայր ժողովրդի հետ: Ինչպես արցախյան պատերազմի ժամանակ, դառնալ հզոր «պարիսպ», փակել թշնամու՝ դեպի մեր հայրենիքը բերող բոլոր ճանապարհները: Սովորողների հայրենասիրական դաստիարակության համար կարևոր դեր կարող են խաղալ մեր մեծ հայրենասերների, ֆիդայիների, Անդրանիկի, Նժդեհի, Դրոյի, Թևանի ապրած կյանքն ու գործունեությունը, Սարդարապատի հերոսներ Դանիել Բեկ և Պողոս Բեկ Փիրումյանների, Սիլիկյանի անմոռաց կերպարները, Ղարաբաղյան պատերազմում անմահացած հերոսների, աշխարհահռչակ զորավարներ Բաղրամյանի, Բաբաջանյանի, Խանփերյանցի, Իսակովի հավերժող օրինակները: Մեր սերունդների հայրենասիրական զգացմունքների ձևավորման գործում կարևոր դեր կարող են խաղալ մեր պետության խորհրդանշանները՝ գերբը, դրոշը, օրհներգը, զինանշանը, դրանց պատմության ուսումնասիրությունը: Դպրոցականների հայրենասիրական դաստիարակության համար մեծ դեր կարող են խաղալ մեր ժողովրդի պատմությունը, գրականությունը, մշակույթը, գրողների, գիտնականների, արվեստագետների հետ հանդիպումները, նրանց՝ հայրենիքի մասին պատմությունները, ստեղծագործությունները, զրույցները և այլն:

Մեր մեծերը հայրենիքի մասին ասել են՝

Հայրենասիրություն ասելով չենք հասկանում միայն հայրենիքի նկատմամբ սերը: Դա անհամեմատ ավելին է... Դա հայրենիքից իր անբաժանելիության գիտակցումն է և երջանիկ ու դժբախտ օրերը նրա հետ միասին անբաժանելիորեն վերապրելը:

Սիրելով մերը հարգենք ուրիշների ունեցածը: Պ. Սևակ

«Սերը դեպի հայրենիքը քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է»: Նապոլեոն

«Օտար երկիրը հայրենիք չի դառնա»: Վ. Գյոթե

«Կարելի է և չսիրել եղբորը, եթե նա վատ մարդ է, անկարելի է չսիրել հայրենիքը, ինչ էլ որ նա լինի»: Հովհաննես Թումանյան

«Այս երկիրը բառերով սիրվող երկիր չէ, անհատական սիրո երկիր չէ: Այս երկիրը համընդհանուր սիրո երկիր է»: Վազգեն Սարգսյան

1.1 Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը նախադպրոցական տարիքի երեխաների համար

Հայրենասիրության պատմական աղբյուրը դարերով ու հազարամյակներով առանձին պետությունների գոյատևումն է որոշակի վայրում, ինչի արդյունքում ձևավորվում է կապվածություն հայրենի հողին, լեզվին ու ավանդույթներին, այն ներառում է ազգայնականությանը հատուկ մի շարք եզրույթներ: Ազգերի կազմավորման ու ազգային պետությունների ստեղծման պայմաններում հայրենասիրությունը դառնում է հասարակական գիտակցության բաղադրիչ մաս XVIII դարում:

Այլ անձանց վերագրելով հայրենասիրական զգացմունքներ, իսկ որոշ իրադարձությունների տալով հայրենասիրական նրբերանգ՝ բնութագրող անձը դրանով հաճախ տալիս է դրական գնահատական: Այն հակադրելի է ունիվերսալիզմից առաջ եկած աշխարհաքաղաքացիության հոսանքին, որը ենթադրում է համամարդկային շահի գերակայում նեղ ազգային կամ էթնիկ շահից: Հայրենասիրության մասին պատկերացումները կապված են հայրենիքի նկատմամբ սիրո հետ, սակայն հայրենասիրության էության վերաբերյալ պատկերացումները տարբեր մարդկանց մոտ տարբեր են: Այդ պատճառով էլ ոմանք իրենց համարում են հայրենասեր, մյուսները՝ ոչ: Իսկական հայրենասիրությունը նրա հոգևոր բնույթի մեջ է: Հայրենասիրությունը կարևորագույն գործոն է սոցիալական խմբում անձի առավել լիարժեք դրսևորման համար: Այն ենթադրում է հայրենիքին անշահախնդիր, անմնացորդ ծառայություն: Ելնելով այս ամենից՝ կարելի է ընդհանրացնել հայրենասիրության առավել էական կողմերը և սահմանել այն: Հայրենասիրությունը անձի առավել նշանակալից բարոյական արժեքներից է, անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեությամբ՝ ի բարօրություն հայրենիքի: .... Այն բարեփոխումները, որոնք կոչված են վերածնելու Հայաստանը, չեն կարող իրենց հիմքում ունենալ բացասական և հակասոցիալական գաղափարներ:

ԳԼՈՒԽ 2.

2.1 Մեր հայրենիքի խորհրդանիշները

Պետական դրոշը որոշակի գույնի (գույների) ու չափի պաստառ է՝ ամրացված սրածայր ձողի վրա: Դրոշը գործածվել է դեռևս Հին աշխարհի երկրներում՝ առավելապես ռազմական նպատակներով՝ որպես զինվորների հավաքի ու համախմբվելու, հեռվից լավ տեսանելի նշան: Դրոշի օգտագործման վերաբերյալ հայոց ամենավաղ տեղեկությունը կապված է Հայկ Նահապետի անվան հետ. գալով Բզնունյաց ծովի (Վանա լիճ) շրջանը՝ նա իր դրոշն է պարզել մի ժայռի վրա: «ՀՀ պետական դրոշի մասին» ՀՀ օրենքով (15.06.2006) Հայաստանի Հանրապետության դրոշը Հայաստանի առաջին հանրապետության (1918–20թթ.) եռագույն դրոշն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով՝ լայնության և երկարության 1:2 հարաբերությամբ: **Կարմիրը** խորհրդանշում է հայ ժողովրդի մշտական պայքարը՝ հարատևման, Հայկական բարձրավանդակի, քրիստոնեական հավատի, Հայաստանի անկախության և ազատության համար, **կապույտը**՝ ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո, **նարնջագույնը**՝ հայ ժողովրդի արարչական տաղանդն ու աշխատասիրությունը:

Գույների խորհուրդը նույնն է: Պետական դրոշը ծածանվում է հանրապետության նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, Կառավարության, Սահմանադրական դատարանի, պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների, դատախազությունների, Մարդու իրավունքների պաշտպանի, Կենտրոնական բանկի, դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսությունների շենքերի և փոխադրամիջոցների վրա, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղերում: Պետական դրոշը բարձրացվում է հանրապետությունում մարզական պաշտոնական առաջնությունների բացման և իջեցվում փակման արարողությունների ժամանակ, բարձրացվում է նաև հայ մարզիկներին միջազգային մրցումներում մրցանակային պարգևներ հանձնելիս:

Պետական զինանշան. Պետական զինանշանը խորհրդանշում է երկրի հասարակական-քաղաքական կարգը: Զինանշանների սաղմերն ի հայտ են եկել նախնադարյան հասարակարգում, առկա են նաև Հին աշխարհի ժողովուրդների բազմաթիվ խորհրդանշային պատկերներում: Վաղ անցյալում ազնվականական կամ

իշխանական տները, երբեմն նաև առանձին անձեր, պետության կազմի մեջ մտնող վարչատարածքային միավորներ նույնպես ունեցել են իրենց զինանշանները:

«ՀՀ պետական զինանշանի մասին» ՀՀ օրենքով (15. 06. 2006) Հայաստանի Հանրապետության զինանշանը Հայաստանի առաջին հանրապետության զինանշանն է: Հեղինակներն են ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը:

Զինանշանի կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի 4 թագավորությունների՝ Բագրատունիների (վերևից՝ ձախ), Արշակունիների (վերևից՝ աջ), Արտաշիսյանների (ներքևից՝ ձախ), Ռուբինյանների (ներքևից՝ աջ) զինանշանները: Վահանը պահում են արծիվը (ձախից) և առյուծը (աջից), իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա ու ժապավեն:

Պետական օրհներգ. Պետական օրհներգը հանդիսավոր երաժշտական ստեղծագործություն է՝ գրված ծրագրային բնույթի բանաստեղծության խոսքերով:

«ՀՀ պետական օրհներգի մասին» ՀՀ օրենքով (25.12.2006) Հայաստանի Հանրապետության օրհներգը Հայաստանի առաջին հանրապետության օրհներգն է՝ «Մեր հայրենիքը» (խոսքը՝ որոշ փոփոխություններով, Միքայել Նալբանդյանի, երաժշտությունը՝ Բարսեղ Կանաչյանի):

2.2 Հայրենասիրությունը սկսում է հենց իմ գյուղից՝ Մուսալեռից

Մուսալեռ գյուղը գտնվում է Արմավիրի մարզում, Էջմիածին տանող ճանապարհին: Այս փոքրիկ գյուղը հանդիսանում է հայկական անկոտրում ոգու և ազգային պայքարի խորհրդանիշը:

Հնագույն Մուսալեռ գյուղը գտնվում է Միջերկրական ծովի արևելյան ափին, պատմական Հայաստանում: Այս տարածքները այսօր գտնվում եմ թուրքական պետության կազմում: Այս գյուղը նշանավորվել է 1915թ. արյունալի դեպքերի ժամանակ իր անկոտրում պայքարով սեփական իրավունքների և տարածքների համար: Մեծ Եղեռնի տարիներ մարդիկ ստիպված լքում էին իրենց հայրենի տները, սակայն մուսալեռցիները խիզախեցին պայքարել թուրքական մարդասպան քաղաքականության

դեմ և զենք վերցրեցին պայքարելու համար: Ավելի քան 4000 մուսալեռցի բարձրանալով մոտակա Մուսա լեռը, պայքարի դրոշ բարձրացրեցին թուրքական իշխանություններին և չնայած սովին, ծարավին 53 օր դիմադրեցին թուրք հրոսակներին:

Ֆրանսիացի և անգլիացի ծովագնացները մոտենալով Մուսա լեռին, փրկեցին մոտ 4200 հայի, նրանց տեղափոխելով Եգիպտոս: Առաջին աշխարհամարտից հետո նրանք վերադարձան իրենց հայրենի գյուղը,. որը արդեն գտնվում էր Սիրիայի նոր սահմաններում: 1939 թվականին Թուրքիան կրկին գրավեց Մուսալեռը, որը բնակիչները վերջնականապես լքեցին գյուղ, ապաստանելով Լիբանանում և Հայաստանում:

Պատմական այս դեպքերը արտացոլված են Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպում, որը 20րդ դարում մեծ հեղինակություն էր ձեռք բերել: Այն հայտնի էր Եվրոպայի հրեաների շրջանում Հոլոքոստի տարիներին: Գիրքը ոգևորում էր մարդկանց և ներշնչում ազատություն և փրկություն: Մինչ այսօր, այդ հերոսական պայքարի հիշողությունները մնացել են հայ նոր սերնդի մոտ: Ամեն տարի սեպտեմբերի երրորդ կիրակի օրը մարդիկ նշում են այս իրադարձությունը հատուկ ծիսակարգով և զոհաբերություն են մատուցում հերոսների հիշատակին: Նրանք պատրաստում են ավանդական կերակուր Հարիսան, թմբուկներ են զարկում և պարում ողջ գիշեր:

Հարիսան պատրաստում են գառան մսից և ցորենից և նրա պատրաստման եղանակը և բաղադրությունը ունի շատ հին պատմություն և փոխանցվում է սերնդեսերունդ: Այս կերակուրը հյուրասիրում են ինչպես տոնական օրերին, այնպես էլ թաղման ժամանակ: Տոնի ժամանակ, մարդիկ պատրաստում են այս համեղ կերակուրը, հավաքվում են կրակի շուրջ, պարում ու երգում ազգային երգեր: Այս ամենի մասին ասվում է Ֆրանց Վերֆելի աշխարհահռչակ այս վեպը հայերեն է թարգմանել բանաստեղծ և թարգմանիչ Պարույր Միքայելյանը: Լույս է տեսել 1964 թվականին, Երևանում: Վեպն այնուհետև ունեցել է հայերեն ևս երեք հրատարակություն (1987, 1990 և 2015 թվականներին): Ֆրանց Վերֆելն իրադարձություններն ընտրելիս, իմաստավորելիս և պատկերելիս առաջնորդվել է իր հիմնական գաղափարագեղարվեստական սկզբունքներով: Վերջնականապես մի կողմ նետելով չդիմանալու պասիվ քրիստոնեական կանխադրույթները, Վերֆելը կանգնում է չարին

ակտիվ, գործուն, հերոսական դիմադրություն ցույց տալու դիրքերում: Վեպի հիմնական գաղափարն այն է, որ բռնության դեմ միայն զինված պայքարով ժողովուրդները կարող են ձեռք բերել իրենց ազատությունը: Կարևոր է նշել նաև, որ Գաբրիել Բագրատյանի հերոսի նախատիպ է հանդիսացել Մովսես Տեր-Գալստյանը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Իմ հայրենիքը»

Խնդիրները

- Երեխաներին ծանոթացնել Հայաստանի քարտեզին, այցելել երեխաների հետ Մուսա լեռան թանգարան, ՀՀ զինանշանին, դրոշին, ընդհանրացնել տարվա ընթացքում երեխաների ստացած տեղեկությունները մեր երկրի հայտնի վայրերի մասին: Դաստիարակել սիրո և հպարտության զգացում:
- Զարգացնել երեխաների խոսքը
- Պարապմունքների ժամանակ ստացած գիտելիքների հիման վրա երեխաներին սովորեցնել հյուսել կապակցված փոքրիկ պատմություններ՝ առաջարկվող թեմայի շուրջ, ամրապնդել հարցերին պատասխանելու նրանց ունակությունը, մասնակցել զրույցին:
- Շարունակել աշխատանքը ստեղծագործական բովանդակությունն առանց բացթողման պատմելու, արտահայտիչ խոսք կառուցելու կարողությունների ձևավորման շուրջ:
- Հարստացնել երեխաների բառապաշարը, սովորեցնել խոսքի մեջ գործածել ածականներ և դրանք համակցել գոյականների հետ:

Անհրաժեշտ պարագաներ՝

ՀՀ քարտեզը, դրոշը, զինանշանը, օրհներգը, նկարներ Հայաստանի քաղաքների և գյուղերի մասին:

Պարապմունքի ընթացքը

Բանաստեղծություն Հայրենիքի մասին, ունկնդրման և քննարկման համար:

Զրույց բանաստեղծության բովանդակության շուրջ.

- Ինչի՞ մասին է հեղինակը պատմում բանաստեղծության մեջ;
- Ի՞նչ է նշանակում Հայաստան բառը մեր բոլորի համար:
- Ինչպե՞ս են անվանում մեր հանրապետությունը:

- Եկեք քարտեզի վրա ցույց տանք Հայաստանի տարածքը:

- Ուշադիր դիտեք քարտեզը և որոշեք՝ որ գույներն են գերիշխում Հայաստանի տարածքում:

Ֆիզկուլտուրայի դադար.

Երեխաները կանգնում են շրջանաձև և կատարում են բանաստեղծության բովանդակությանը համապատասխան շարժումներ:

Զրույց ՀՀ խորհրդանիշների մասին

Դաստիարակ-

Երեխաներ, յուրաքանչյուր հանրապետություն ունի երեք տարբերակիչ, իրեն բնորոշ նշան՝ դրոշը, զինանշանը և հիմներգը:

Եկեք երգենք կարմիր, կապույտ, ծիրանագույն երգը, մեր դրոշի մասին: Մեկնաբանենք դրոշի գույների նշանակությունը: Ցուցադրենք դրոշը, որը ավելի տեսանելի է դարձնում պարապմունքը:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ			
Պարապմունք.	Խումբ	Թեմա	Տևողություն
Ինտեգրված խոսքի զարգացում և նկարչություն	4-5 միջին խումբ	Ըստ Սարմենի (Արմենակ Սարգսյան, Հայրենիք՝ ոտանավորի ունկդրում և քննարկում	3, պարապմունք
Նպատակը	1)հարստացնել երեխաների բառապաշարը 2) Դաստիարակել սիրո և հպարտության զգացում 3)Ամրապնդել հարցերին պատասխանելու ունակությունը, մասնակցել զրույցին զարգացնել խոսքը:		
Նյութեր	ՀՀ դրոշ ,քարտեզ, ՀՀ զինանշան, օրիներգ, նկարներ Հայաստանի տեսարժան վայրերի մասին: Մեծադիր պաստառի վրա գրված բանաստեղծությունն իր տողերին համապատասխան նկարներով: Ա4 թղթեր, գունավոր մատիտներ		
Մեթոդներ	Անհատական զույգերով, փոքր խմբերով		
Խթանման փուլ	• Երեխաները նստած են սեղանի շուրջ 3-4 հոգանոց խմբերով: Խմբերին բաժանել ,Հայրենիքի՝ թեմային վերաբերվող գլուխկոտրուկներ, առաջարկել հավաքել գլուխկոտրուկները և քննարկել: • Քննարկումից հետո երեխաները ներկայացնում դն թե ինչի մասին էր բովանդակությունը, երեխաներին տրվում է 5 րոպե ժամանակ (այդ ընթացքում դաստիարակը շրջում է խմբերով և քննարկումից հետո լսում է երեխաների պատասխանները:		

	• Առաջարկել թեմային վերաբերվող հանելուկներ
Իմաստի ընկալման փուլ	• Բարձրաձայն ընթերցանություն • Ընթերցել Արմենակ Սարգսյանի Հայրենիք բանաստեղծությունը և յուրաքանչյուր տող ընթերցելիս երեխաներին առաջարկել փակցնել համապատասխան նկարը • Տեքստի ավարտից հետո քննարկման և բաց հարցերի միջոցով ամփոփել հետևյալ հարցերը -Ինչի մասին էր պատմում հեղինակը բանաստեղծության մեջ -ինչ է նշանակում հայրենիք բառը բոլորի համար (երեխաները ազատ արտահայտվում են) -ինչ լեզվով ենք խոսում Հայաստանում -Ինչպե՞ս ենք անվանում մեր հանրապետությունը -Ո՞րն է մեր Հայաստանի Մայրաքաղաքը -Ո՞րտեղ ենք ապրում մենք(գյուղ Մուսալեռ) -Քարտեզի վրա ցույց տալ մեր հայրենիքը -Ի՞նչ գույներ ունի մեր դրոշը -Ի՞նչ եք զգում ՀՀ օրհներգը լսելիս
Ակտիվացնող վարժություն	Զինվորիկ Երեխաները կանգնում են և կատարում են բանաստեղծությանը համապատասխան շարժումներ

Կշռադատման փուլ	Նկարչության պարապմունքն ավարտելուց հետո երեխաները դաստիարակի օգնությամբ կազմում են դեմ առ դեմ շրջաններ և պատմում իրենց կատարած աշխատանքի մասին **Վերջում քննարկել հետևյալ հարցերը** • Ի՞նչ աշխատանք կատարեցինք այսօր • Ի՞նչն ամենից շատ դուր եկավ նրանց • Ի՞նչն էր ձեզ համար դժվար **Ընթացքում կատարեք էքսկուրսիա հայտենի գյուղում Մուսալեռում** • **Դիտել տեսարժան վայրերը** • **Այցելել Մուսալեռի հուշարձան և թանգարան**

Տնօրենի և ավագ դաստիարակի կարծիք

Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը հետազոտական աշխատանքում

Ա. Բալայանը ներկայացնում է հայրենաճանաչողության կարևորության մասին քանի որ հայրենասիրական դաստիարակության վրա աշխատանքի նախադպրոցական տարիքում տեղի է ունենում ընտանիքի անմիջական ներգործության ազդեցությամբ և մանկավարժական միջոցների կիրառմամբ: Միևնույն ժամանակ տարբեր մեթոդների համադրությամբ և երեխաների գործունեության ինտեգրմամբ, որը ևս իր աշխատանքում ներկայացրել է դաստիարակը: Բացի տեսական մասը յուրացնելուց դաստիարակը իր առջև դրված լուծումները գտավ երեխաների գործունեության տարբեր ձևերում՝ խաղերում առօրյայում, գործնական և խմբային աշխատանքներում ,որտեղ որ երեխաները իրենց շատ լավ էին զգում Այն, ինչ որ երեխաները լսեցին, տեսան, կիրառեցին շոշափելի և հասանելի դարձավ նրանց հոգեկան գործընթացում մտածողության, հիշողության, երևակայության, զգայական ընկալումներում: Դաստիարակը հետազոտական աշխատանքի արդյունքում հասավ իր առջև դրված նպատակին, այն որ հայրենիքը սիրելու համար պետք է նախ և առաջ ճանաչել այն: Սաների մոտ հայեցի դաստիարակության գործում մեծ դեր ունի հայրենասիրության սերմանումը:

Սեր դեպի մայրը, հողը, կրոնը, արվեստը….

Դաստիարակի կողմից հետազոտվող թեմայի կարևորությունը շատ մեծ է և համապատասխանում է կրթական չափորոշիչներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա: Հայրենիք հասկացությունը շատ լայն ու խորն է: Այն տարածք է, ժողովուրդ, մայրենի լեզու, ընտանիք, կենցաղ, մշակույթ, հավատք, ավանդույթներ, պատմություն և հազարավոր նուրբ լարեր, որոնք սիրով միահյուսվելով և համեմվելով դառնում են Հայրենիք: Սակայն մինչև հայրենիքի գաղափարին տիրապետելը նախ և առաջ պետք է սկսել հայրենաճանաչողությունից, որը որ խիստ անհրաժեշտ է ձևավորել երեխաների մեջ, դեռ վաղ մանկության շրջանում՝ ընտանիք, մանկապարտեզ, դպրոց և այլ կրթական համակարգերում: Նախադպրոցական տարիքում հայրենաճանաչողության ձևավորման ազգապահպան գործընթացում մեծ դեր ունենք նաև Մենք՝ մանկավարժներս, քանի որ ճիշտ ձևավորելու և հայրենասիրական ոգով դաստիարակելու արդյունքում կունենանք զարգացած, հայրենասեր, մարդասիրական և քրիստոնեական արժեհամակարգով օժտված օրինապահ քաղաքացիներ, ովքեր կնպաստեն մեր պետության զարգացման գործում: Նպատակային և կարևոր եմ համարում հետագա հայրենաճանաչության պատկերացումները նախադպրոցական տարիքում՝ միջին խմբում մեծացնելու և ամրապնդելու նպատակով կատարել շրջագայություններ՝ բացահայտելու մեր հայրենիքի տեսարժան վայրերը, մշակութային արժեքները, այս գործընթացին ընդգրկելով նաև մեր սիրելի ծնողներին՝ պահպանելով երեխա-ծնող-մանկապարտեզ կապը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:
2. Ա. Ղուկասյան, Հայոց պատմությունը 8-9-րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013:
3. Արմինե Սարգսյան, Արման Մալոյան, Հայոց պատմություն 10-11-րդ դասարաններում:
4. Աֆորիզմներ հայրենիքի մասին՝ https://grqamol.am/article/hayreniqi-masin/
5. https://hy.wikipedia.org/wiki
6. Մուսալեռ հուշարձան https://picnichotels.com/hy/musaler-memorial-harisa-festival-hy/
7. Ուսումնամեթոդական ձեռնարկ (2013թ.)
8. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես N 1, 2001
9. Մանկավարժություն, Յու. Ա. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան (Մանկավարժ հրատ, 2005թ.) էջ 348-349)